600.0011.27.01.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2016 թվականի №11Ա
ք.Երևան

«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ №0008 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ, 38-րդ, 45-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի ապրիլի 15-ի «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N40Ն որոշումը, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի №1233Ն որոշման 9-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալի 2016 թվականի հունվարի 19-ի №02/08/49-16, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի նոյեմբերի 30-ի №/ԳԳ/9836/30.11.15 և դեկտեմբերի 10-ի №/ԳԳ/10145/10.12.15 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 30-ի «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №88Ա որոշմամբ «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ջրային համակարգի օգտագործման №0008 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի №1233Ն որոշման 8-րդ կետին համապատասխան՝ «Երևանի ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության

սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում համապատասխան համաձայնագրի պատճենը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել այն սահմանված կարգով կնքվելուց հետո տասնօրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ 1-ին կետը՝ 2016 թվականի մայիսի 30-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
27 հունվարի 2016թ.
ժամը 16[00]